15. ՎԱՐՊԵՏ ՏԸՂԵՆ

Մեկ մարթըմ կէղի, էնու տըղին կասա. - Էլի՛, մե քանռսուն օխչար կա, տա՛ր ծախի՛, քանռսուն պեռ ցորեն ա՛ռ, արի՛:

Տըղեն կը տանի, օխչըրներ մեկ մեկ կը մորթա, կուտա, պեռներ կը մընան տանռտակ:

Կը գա օրըմ, պատի մ'անռեճ կը պոզա, փանջարից խանըմ գյըլէխ կը խանա տէուս, կիշկա: Կը տեսնի, օր մարթու ճըրվածք փրփուր տիզվե:

Խանըմ կասա. - Էս մարթ շատ զորեղ ա, խի կանչիմ, գա վեր:

Խանըմի իրիկն էլ գացե բազըրկանութին:

Խանըմ էտա մարթուն կը կանչա վեր, կասա. - Մա՛րթ, տէու ֆըլան պանի խամար կուվաթով կէրևաս, տէու կանա՞ս մեկ գյիշեր ձի մոտենաս քանռսուն տիր:

Ասաց. - Ընչի՞ չըմ կանա:

Ասաց. - Թե կարցար, ես քյե քանռսուն պեռ ցորեն տամ, թե չէ՝ քէու քանռսուն ջըվալ ու քանռսուն էլ քյենե կառնիմ:

Ասաց. - Շա՛տ աղեկ:

Գյիշեր տըղեն գյընաց, խանըմի ծոց պառկավ: Չում խըլիսուն էրաց, քանռսունի վերեն մարթուց արուն էկավ:

Կնիկ ասաց. - Չէղա՛վ, քէու տավըրներ պիտի տաս:

Տըղեն կաբէուլ չէրաց: Գացին կազէու մոտ:

Տըղեն ասաց. - Ես էկեր եմ, էսոր խետ շարթ եմ պըռնե՝ մե պալանտար զանիմ կոքյովի ծառ, եթե մեկ պալանտըրին քանռսուն կոքյով ընգավ, խանըմ իմ շարթ տը տա, թե չընգավ, ես տը

տամ խանըմին: Պալանտար զարկի, քառսուն կոքյով ընգավ, քառսունի մեչեն մեկ փուճ ա, մըկա կասա՝ տու տը տաս:

Կազին ասաց. - Էն պալանտար զարկե, քառսուն կոքյով էցկե, մեկ փուճ էղե, չէղե, վի՞ր խամն ա: Տու՛ էնու շարթ:

Խանըմ էնու քառսուն պեռ ցորեն պըռնեց:

Վերչ՝ խանըմին մեկ օսկի կաքավըմ կեր, ասաց. - Մա՛րթ, արի՛ ես, տու շարթըմ պըռնենքյ: Տու պառկի մըչ ձի, մըչ իմ ախչիկ, թը տու չում խըլիսուն ոչ զիս, ոչ իմ ախչկեն ծեռ չըթալեցիր, օսկի կաքավ կը տամ քյե, թե չէ՝ մեր քառսուն պեռ ցորեն ետ տը տաս:

Տըղեն ասաց. - Շա՛տ լավ:

Տըղեն պառկավ մըչ կնիկ, մըչ ախչիկ, էպի, սամի թելով ուր թերմաշ կապից էնու ճուռ:

Խանըմ գյիշեր էլավ, սամի թել հարծըրեց, էթալ:

Տըղեն էլավ խընդ խանըմի ախչիկ:

Չում լուսուն խանըմ ասաց. - Տու էլեր ես խընդ ախչիկ, իմ ցորեն տու:

Էն էլ ասաց. - Չէ՛, օսկի կաքավ տը տաս:

Էլան, գացին կազու մոտ շարիաթ:

Կազին ասաց. - Ի՞նչ ա, գինա էկաքյ շարիաթ:

Տըղեն ասաց. - Ես իմ ծին կապեր էր սընի՝ մըչ էրկու առվուտ: Նա՛ էնու պերան էն առվուտ կը խասեր, նա՛ էն մեկէլ առվուտ ափ կարծեր: Առվուտի տեր գյընաց, ծին հարծըրեց, մըտուց առվուտի մեչ: Մըկա ի՞մ սուջն ա, թե՞ տիրոչ, օր ծին հարծըրեց, մըլեց առվուտի մեչ:

Կազին ասաց. - Հանցանք էնու ա, քանի որ էն մըլե արտի մեջ:

Օսկի կաքավն էլ խանըմից առավ:

Ցորեն էպառց վըր տավըրներուն, գյընաց:

Շատ գյընաց, թե քիչ, քաղքից մի քիչ զատընցավ, տեսավ բազըրկանըմ էկավ էնու հառեճ՝ էտա խանըմի իրիկն:

Բազըրկան տեսավ օսկի կաքավ, ասաց. - Մե թաքյըմ տուն կա, էս էլ տանեմ, էնեմ ջուխտ:

Ասաց. - Մա՛րթ, ի՞նչ տամ քյե՝ էտա կաքավ տաս ձի:

Ասաց. - Առեր եմ ոռըմ, կըտամ ոռըմ:

Մարթն ասաց. - Ուր քյեֆն ա, ըստ՝ խա՛լվաթ ի, պա՛մ տամ, կաքա՛վ մոտեն առիմ:

Գա՛ցին ծորու մեչ: Մարթն քա՛ր մ'իտիր խանըմի իրկան օտքերու տակ, մեկ էլ իր օտքերու տակ:

Ասաց. - Էտա ի՞նչ տ'էնես:

Ասաց. - Տընիմ մեր օտքերու տակ, օր վա՛րտըվերվան խեղեղ մե չըտա՛նի:

Ասաց. - Մա՛րթ, մենք չում ե՞փ մընալու ենքյ ըստեղ, օր խեղեղից կը վա՛խենաս:

Ասաց. - Ես էսա ամսուն կը տընեմ, մեկէլ ամսուն կը կակղի, նոր էն մեկէլ ամսուն կը քա՛շեմ:

Ասաց. - Նալա՛թ գա՛ քյե, ես չում մընալու եմ էսա տեղ:

Ու էթող, գյընա՛ց խընդ ուր պա՛նին:

Տըղեն առավ քա՛ռսուն պեռ ցորեն ու օսկի կաքա՛վ, էկավ ուր խոր տուն: